ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանք-ներում ընդգրկվող նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

- Ընտրովի պատասխանով առաջադրանքների համար տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:

  Կարճ պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: Ըստ առաջադրանքի պահանջի պետք է ընտրել բոլոր ճիշտ կամ սխալ պատասխանները: Այդ առաջադրանքներում ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ **չի նշվում:** Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համախատասխանող բոլոր միավորները:

Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ, թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Տեսակ	Քանակ	Միավոր
Ընտրովի պատասխանով	45	45
Կարճ պատասխանով	15	15
Ընդամենը	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ընտրովի պատասխանով

Նշվածներից ո՞րը ֆիզիկական կուլտուրայի դասի կառուցվածքային մաս չի համարվում: (1 միավոր)

1) ներգրավիչ
2) խաղային
3) եզրափակիչ
4) հիմնական

Կարճ պատասխանով

Նշվածներից որո՞նք են ներառված «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրի «Մարմնամարզական վարժություններ» բաժնում: (1 միավոր)

1. շարային վարժություններ
2. ընդհանուր զարգացնող վարժություններ
3. մագլցման վարժություններ
4. պարային վարժություններ
5. հենացատկեր
6. ցատկացանցի վարժություններ
7. կախեր և հենումներ

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Ֆիզկուլտուրա» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.	«Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական առարկայի ծրագիր (1-12-րդ դասարաններ), ըստ ԿԳՄՍ նախարարի հրամանների. • հրաման թիվ 39-Ն, 07.05.2024թ. • հրաման թիվ 68-Ն, 28.07.2026թ.	
2.	Առաքելյան Վ.Բ., Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Յու.Գ., Մինասյան Հ.Ս., Հարությունյան Ա. Ա.	Ֆիզիկական կուլտուրա, Ուսուցչի ձեռնարկ հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարան-ների համար, Երևան, Աստղիկ գրատուն, 2008, 184 էջ:
3.	Գաբրիելյան Հ. Հ., Ղազարյան Ֆ. Գ., Մինասյան Հ. Ս., Գրիգորյան Յու. Գ.	Ֆիզիկական կուլտուրա. դասավանդման մեթոդիկա 5-9-րդ դասարաններ: Ուսուցչի ձեռնարկ /Կազմ. հեղ. խումբ, Եր.: 2013.- 120 էջ:
4.	Մինասյան Հ. Ս., Գաբրիելյան Հ. Հ.	«Ֆիզիկական կուլտուրա» գիտելիքի հիմունք-ներ, Երևան, 2011, 128 էջ:
5.	Մամաջանյան Վ. Մ.	Աթլետիկա: Ուսումնական ձեռնարկ: Եր: 2003, 187 էջ
6.	Խիզանցյան Ռ. Մ., Սելումյան Ն. Վ.	Մարմնամարզության հիմնական միջոցները դպրոցում (1-12-րդ դասարաններ), Ուսումնական ձեռնարկ Եր.: 2014, 190 էջ:
7.	Ստեփանյան Ա. Գ.	Կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաս-տիարակությունը: Ուսումնական ձեռնարկ.- Եր.: Հեղինակային հրատարակություն, 2025, 249 էջ:

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: